

ԿԱՐԾԻՔ

Շավարշ Ազատյանի «V-VIII դարերի հայ սրբախոսական գրականության պատմագիտական արժեքը» թեմայով է.00.05 «պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Շավարշ Ազատյանի ատենախոսությունը նվիրված է հայ միջնադարյան մատենագրության կարևորագույն ճյուղերից մեկի՝ սրբախոսական գրականության մեջ առկա պատմագիտական, աղբյուրագիտական արժեքավոր տեղեկությունների վերլուծությանը:

Առհասարակ, պետք է նշել, որ հայ միջնադարյան պատմության հետազոտության համար ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում եղել են հիմնականում պատմագրական երկերը, ժամանակագրությունները, մասամբ նաև՝ ձեռագրերի հիշատակարանները: Մինչդեռ պատմագիտության ամենատարբեր հարցերի լուսաբանման համար մասնագիտական լայն քննարկման առարկա կարող են դառնալ եկեղեցական ծիսամատյանները, սրբախոսական մատենագրությունը, աստվածաբանական, ջատագովական երկերը, մեկնությունները, առակները և այլն: Այսօրինակ երկերն ուսումնասիրվել են հիմնականում բանասիրական, աստվածաբանական տեսանկյունից, իսկ դրանցում առկա պատմագիտության համար ուշագրավ և արժեքավոր տեղեկությունները պատշաճ ուշադրության չեն արժանացել: Այս առումով, «անտեսված» բնագրերի շարքին կարելի է դասել նաև սրբախոսական սովորածավալ մատենագրությունը, որից մի քանի ուշագրավ նմուշներ սույն ատենախոսության մեջ ենթարկվել են համակողմանի վերլուծության: Ուստի՝ առաջին հերթին ողջունելի է հատկապես այսօրինակ թեմայի ընտրությունը, ինչը միանգամայն նոր հայացք է հայ միջնադարյան պատմության ուսումնասիրմանը:

Աշխատանքը բաղկացած է Ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից (207 էջ) և հավելվածից (3 լուսանկար):

Առաջին գլխում՝ **«V-VI դդ. Հայ սրբախոսական երկերի բնութագրական կողմերը»**, ստենախոսը ներկայացնում է հայ սրբախոսական գրականության նշանակությունը, առանձնահատկությունները, փորձում դրանք դիտարկել հունական և ասորական սրբախոսությունների համեմատությամբ՝ ընդգծելով հայկական միջավայրում ստեղծված երկերի առանձնահատկությունները: Անդրադառնում է սրբախոսական հերոսի ընտրությանը, կերտմանը, վկայաբանություններում արտացոլված վաղմիջնադարյան մարդու՝ մահվան մասին պատկերացումներին: Ատենախոսն առանձին ներկայացնում է սրբախոսական «հերոս»-ներին՝ զինվորներ, ճգնավորներ, երկրագործներ, կախարդներ՝ առաջադրելով այն մոտեցումը, որ սրբերին վերագրվել են հին արևելյան և անտիկ պատկերացումներին բնորոշ գերբնական հատկանիշներ:

Ատենախոսության երկրորդ՝ **«Հայաստանի և հարակից երկրների I-III դդ. պատմության արտացոլումը վաղ շրջանի հայ սրբախոսական գրականության մեջ»** (ի դեպ, սեղմագրում վերնագիրը մի փոքր տարբեր է) գլուխը նվիրված է Եդեսիայի Աբգար թագավորի և Ոսկյանների վարքաբանական գրույցներին, Սուքիասյանների վկայաբանությանը: Ամենայն մանրամասնությամբ ներկայացվում են նշյալ երկերում հիշատակվող տեղանունները, անձինք, պատմական իրադարձությունները: Ատենախոսը քննում է այդ երկերում հասարակական-քաղաքական, տնտեսական կյանքի արտացոլումը, դրանց հիման վրա տալիս թագավորական տների և իշխանական տոհմերի և նրանց տիրույթների նկարագրությունը:

Աշխատանքի երրորդ՝ ամենածավալուն գլուխը կրում է **«Պարսկական և արաբական տիրապետության շրջանում ստեղծված սրբախոսական երկերը և դրանց պատմագիտական արժեքը»** խորագիրը: Այն նվիրված է 6-8-րդ դդ. ստեղծված

Շուշանիկի, Հիգոփուզիտի, Դավիթ Դվնեցու, ինչպես նաև վրաց մատենագրությունից հայտնի՝ Եվստաթիոսի և Աբո Թբիլիսեցու վկայաբանություններին: Հեղինակն ընդգծում է այս երկերի գաղափարական կարևորությունը օտար տիրակալների դեմ պայքարում:

Ատենախոսն այս և նախորդ զլուխներում ներկայացվող երկերը քննում է պատմական իրադարձությունների համատեքստում, մատենագրական աղբյուրներից բացի ներառելով նաև վիմագրական տվյալներ և հնագիտական պեղումների արդյունքներ: Հատկանշական է, որ հայկական վարքերը և վկայաբանությունները համեմատվել են հունարեն, ասորերեն, լատիներեն, վրացերեն տարբերակների հետ: Այլ կերպ ասած՝ վիմագրական, հնագիտական և մատենագրական սկզբնաղբյուրներն ուսումնասիրվել են փոխլրացման եղանակով, միաժամանակ հայկական և օտար սկզբնաղբյուրների համադրությամբ, ինչն, իհարկե, կարևոր է պատմական այս կամ այն իրողության համակողմանի վերլուծության համար: Քննելով վկայաբանություններում առկա տեղեկությունները Հայաստանի ռազմական, քաղաքական, տնտեսական, առօրեական կյանքի վերաբերյալ՝ ատենախոսն ուշադրության է արժանացրել անգամ ամենաանշան թվացող տեղեկությունները, որոնց միջոցով կատարել է ուշագրավ հստակեցումներ: Հատկանշելի է, որ այս երկերը դիտարկվում է ոչ միայն որպես Հայաստանի, այլև հարակից երկրների պետական կարգի, հասարակական հարաբերությունների, կրոնաիրավական, վարչական քաղաքականության ուսումնասիրման սկզբնաղբյուր (ինչպես օրինակ՝ Հիգոփուզիտի վկայաբանության տեղեկությունները Իրանի դատական համակարգի մասին (էջ 137-141)): Այսու, աշխատանքում շեշտվում է հայկական սկզբնաղբյուրների կարևորությունը ոչ միայն Հայաստանի, այլև հարևան երկրների պատմության և մշակույթի հետազոտության համար:

Այդուհանդերձ, ցանկանում են ատենախոսի ուշադրությունը հրավիրել որոշ հարցերի վրա և նրա հետագա հետազոտական աշխատանքներին օգտակար լինելու նպատակով ներկայացնել մեր առաջարկներն ու դիտարկումները:

1. Ատենախոսը սրբախոսական երկերի ընտրության համար առաջնորդվել է երկերի ուսումնասիրվածության աստիճանով, ընտրել այն երկերը, որոնք, իր խոսքով, «ավելի քիչ են հայտնվել հայագետների տեսադաշտում» և շեշտադրել է «այն գրվածքները, որոնցում չափազանցությունները սակավ են, պատմագիտական տեղեկությունները հարուստ» (էջ 5): Իհարկե, ծավալի առումով անհնար կլինեք մեկ աշխատանքի մեջ ներառել 5-8-րդ դդ. ողջ սրբախոսական գրականությունը, սակայն մեթոդական առումով միջնադարյան գրվածքներում առկա «չափազանցությունները» ոչ պակաս կարևոր են ժամանակի մարդուն, նրա աշխարհընկալումը պատկերացնելու և վերլուծելու, ինչու ոչ՝ նաև քաղաքական պատմության համատեքստում դիտարկելու համար (ինչպես օրինակ՝ «Տեսիլ»-ները, որոնց ակնարկում է նաև ատենախոսը (էջ 15) կամ վախճանաբանական գրվածքները): Ուստի՝ հետագա ուսումնասիրության ընթացքում կարելի է չառաջնորդվել միայն չափազանցությունների սակավությունը և պատմական փաստերի առատությունը հաշվի առնելով:

2. Ատենախոսը նշում է, որ հունական և ասորական մատենագրության մեջ սրբախոսական գրվածքները եղել են առանձին հավաքածուներով՝ հազվադեպ ընդգրկվելով պատմագրական երկերում: Մինչդեռ հայ իրականության մեջ առաջին վարքերն ու վկայաբանություններն ընդգրկված են եղել պատմագրական երկերի շարքում և «Միայն հետագայում հոգևորականության ջանքերով դրանք առանձնացվել են, ընդգրկվել ճառընտիրներում, տոնացույցներում, հայամավորքներում ու հանդես են եկել առանձին գրական երկի տեսքով» (էջ 45)՝ համաձայնելով Ա. Սրապյանի տեսակետի հետ: Մյուս կողմից ատենախոսը գրում է, որ օրինակ, Մովսես Խորենացին ծանոթ է եղել Աբգարի գրույցի հայերեն թարգմանությանը (էջ 46), այսինքն, ընդունում է Աբգարի գրույցի հայերեն տարբերակի՝ Խորենացու պատմությունից անկախ լինելը: Հետևաբար, ինչպե՞ս կարելի է պնդել, որ վաղ սրբախոսություններն ընդգրկված են եղել պատմագրական երկերում և միայն հետո են առանձնացվել: Արդյո՞ք հեղինակը բացառում է, որ

Ճատընտիրների, Հայսմավուրքների կազմող-խմբագիրները նույնպես կարող էին օգտված լինել այդ անկախ աղբյուրից, այլ ոչ թե պատմագրական երկից, կամ միգուցե՝ երկուսից էլ: Այս առումով հետաքրքրական կլիներ համեմատել միննույն վարքի, վկայաբանության՝ Հայսմավուրքներում (նախածերենցյան և ծերենցյան), Ճատընտիրներում և պատմագրական երկերում եղած տարբերակները: Իհարկե, հայր Մկրտիչ Ավգերյանի կազմած «Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց» կոթողային ժողովածուում հիմնականում մեկտեղված են բոլոր աղբյուրները, սակայն զուտ աղբյուրագիտական հետազոտության համար նշյալ հրատարակության կառուցվածքը, կազմողի խմբագրումները և բանասիրական նշումները երբեմն շփոթ են առաջացնում:

3. Երբեմն միջնադարյան իրողությունները գնահատվում են խիստ ժամանակակից մոտեցումներով: Օրինակ՝ արտահայտված այն միտքը, որ «Հավանաբար, վկայաբաններն անհատի և բազմության հակադրության սյուժեն օգտագործելով, փորձել են առավել պատկերավոր դարձնել իրենց շարադրանքը՝ ճիշտ գնահատելով նաև բազմության հոգեբանական առանձնահատկությունները» (Էջ 19): Իսկապե՞ս կարծում եք, որ վարքագիրները կամ վկայաբանները բազմության հոգեբանական առանձնահատկությունները գնահատելով են կառուցել իրենց երկը կամ նման խնդիր են դրել իրենց առջև: Նրանք պարզապես «առավելագույնս» նկարագրել, ներկայացրել են իրենց հերոսին՝ արդեն իսկ սրբախոսական գրականությանը բնորոշ սկզբունքներով, նաև՝ չափազանցություններով: Միանշանակ չէ նաև այն միտքը, թե՝ «ապացուցված է, որ կրոնական գրականությունը ներգործել է պարզ հավաստիացման միջոցով՝ զուրկ լինելով փաստականությունից»: Կրոնական-աստվածաբանական գրականության համակարգում մեկնողական ստվարածավալ, տարաբնույթ մատենագրությունն արդեն իսկ վկայում է, որ պարզ հավաստիացումը բավարար չի եղել և տարբեր ժամանակներում անհրաժեշտություն է եղել քննել, բացատրել, կրոնական իրողությունները, աստվածաբանական ճշմարտությունները: Նույնիսկ այնպիսի բնույթի ստեղծագործություն, ինչպիսին «Տեսիլն» է, հայ

իրականության մեջ արժանացել է մեկնության, ինչպես օրինակ, սբ. Ներսեսի Տեսիլի մեկնությունը: Սրա լավագույն ապացույցն է նաև անտիկ փիլիսոփայության «կիրառումը» աստվածաբանության մեջ:

4. Խոսելով սրբախոսական հերոսի ընտրության մասին՝ հեղինակն արձանագրում է, որ «Հունա-ասորական երկերում չեն հանդիպում սեռերի կամ ազգությունների միջև խտրականություններ» (էջ 23): Մինչդեռ, ըստ հեղինակի, հայ սրբախոսները հերոսի ընտրության հարցում սահմանել են սեռային և ազգային որոշակի բաժանարարներ: Ասվում է, որ «կանայք առհասարակ ընդգրկված չէին հայ եկեղեցական կառույցում, նրանց արգելվում էր քահանա դառնալ» (էջ 23)՝ վկայակոչելով Մխիթար Գոշի «Դատաստնագիրքը»: Ճիշտ է՝ կինը քահանա դառնալ չէր կարող (ի դեպ, նաև հունական և ասորական եկեղեցում), սակայն հայ եկեղեցին ունեցել է կին սարկավագուհիներ, որոնց մասին վկայություններ կան նույն Մխիթար Գոշի, Սմբատ Սպարապետի Դատաստնագրքերում, Մաշտոց ժողովածուներում, որոնք պարունակում են սարկավագուհիների ձեռնադրության կանոններ: Այսինքն, կանայք հայ եկեղեցական կառույցից ամեննին դուրս չէին: Չմոռանանք, որ Հայ եկեղեցու առաջին նահատակը, նախավկան Սանատրուկ թագավորի դուստր սուրբ Մանդուխտն է: Ինչ վերաբերում է Փավստոս Բուզանդի՝ Ռշտունյաց տիկին Համագասպուհի Մամիկոնյանին «սուրբ» չկոչելուն, ապա քիչ հավանական է, որ դա պատմիչի անձնական «ընտրությունը» լիներ: Հայտնի է, որ հայ մատենագրության մեջ սրբադասման հստակ կանոն մեզ չի հասել: Սրբադասման համար կարևոր է եղել թե՛ ժողովրդական ավանդության ուժը և թե՛ եկեղեցական ճանաչումը, սակայն Տոնացույցի փոփոխության հաստատման վերջնական իրավունք ունեցել է միայն կաթողիկոսը: Իմ կարծիքով, Փավստոսը չէր կարող միտված լինել, ավելի ճիշտ՝ իրավասու չէր որևէ մեկին «սրբացնելու»: Միանշանակ չէ նաև ատենախոսի առաջադրած սրբադասման համար ազգային պատկանելության գործոնի առկայությունը, եթե կրկին հաշվի առնենք, որ հայ եկեղեցական Տոնացույցում և Հայամավորքում սրբերի հիմնական մասը ծագումով հույն, ասորի կամ պարսիկ են,

փոխարենը շատ քիչ են հայազգի սրբերը: Եվ առհասարակ, սրբախոսական հերոսների համար եղել են ընդհանուր համաքրիստոնեական տիպարներ, որոնց հետևողությամբ կերտվել են նաև «ազգային սրբերը»: Ամեն դեպքում, սրբադասման երևույթը Հայ եկեղեցում իսկապես մի փոքր անորոշ է, ուստի «սուրբ» կոչվելու հանգամանքը քննելիս պետք է հաշվի առնել եկեղեցական ավանդությունը և կանոնները:

5. Ատենախոսության 3.3 գլխում անդրադառնալով Քրիստոնեության գլխավոր խորհրդանիշ Խաչի պաշտամունքին, հեղինակը նշում է, որ «խաչի նման լայն կիրառությունը բնականաբար, թշնամանք էր հարուցելու Հայաստանը նվաճած այլակրոնների, հատկապես իսլամի հետևորդ արարների միջավայրում» (էջ 154) և որ իսլամի հետևորդների համար «Խաչն անընդունելի էր նաև գաղափարաբանության առումով: Խաչը Հիսուսի հիմնադրած եկեղեցու, նրա անգեն պայքարի խորհրդանիշն էր» (էջ 154): Համաձայնելով ասվածի հետ՝ հավելենք, որ խաչի պաշտամունքի դեմ պայքարում էին ոչ միայն այլակրոնները, այլև քրիստոնեական որոշ ուղղություններ, ինչպես օրինակ՝ նեստորականները, որոնք հաստատվել էին հիմնականում Պարսկաստանում՝ վայելելով Պերոզ թագավորի (457/59-484) հովանավորությունը: Իսկ իսլամադավանների համար խաչի պաշտամունքը Բացի քրիստոնեության գլխավոր խորհրդանիշ լինելուց ընկալվում էր նաև որպես կոապաշտություն, ինչպես քրիստոնեական Սուրբ Երրորդությունը՝ որպես բազմաստվածության դրսևորում: Մյուս կողմից, վաղ շրջանի քրիստոնեական պատկերացումներում իսլամն ընկալվում էր՝ որպես քրիստոնեական աղանդ, մասնավորապես՝ որպես արիոսականության դրսևորում. Մուսամեդի ուսուցիչը համարվել է արիոսական վանական Սարգիս Բհիրան: Ինչպես կարդում ենք վկայաբանություններում, նոր վկաների՝ Սուրբ Երրորդությանը պաշտելու խոստովանությունն իսլամական առաջնորդների համար «հայհոյություն» էր միակ Աստծուն: Ուստի՝ կարևոր է հաշվի առնել նաև կրոնների մեջ այս պարզ թվացող գաղափարական հակասությունները և դրանց ազդեցությունը պատմական և քաղաքական իրդությունների վրա: Այս

առումով, խաչին նվիրված երկերը նպատակ ունեն ոչ միայն պարզապես գովաբանելու և փառաբանելու խաչը, ինչպես նշվում է ատենախոսության մեջ (էջ 154), այլև բացատրելու դրա խորհուրդը՝ ինչպես Սահակ Բ Չորովորեցի կաթողիկոսի Շարականներում, այնպես էլ նրանից առաջ և հետո Խաչին նվիրված Ներբողներում (Դավիթ Անհաղթ փիլիսոփա, Թեոդորոս Քոթենավոր, Ջաքարիա Չագեցի և այլն):

6. Ատենախոսն իր առջև դրված խնդիրներից է համարում հատկապես գուտ քաղաքական կամ տնտեսական պատմություն ներկայացնելով չսահմանափակվելը, այլ այդ տեղեկությունները նաև առօրեականության պատմության համատեքստում ուսումնասիրելը՝ անդրադառնալով անգամ մարդկանց արտաքին տեսքի, սանրվածքի մասին տեղեկություններին, ինչն, ատենախոսության ամենաուշագրավ դրվագներից է: Հետաքրքրական կլիներ ձեռագրերում գտնել աշխատանքի մեջ ներկայացվող սրբերի մանրանկարները (հատկապես Հայսմավուրքներում հանդիպում են ուշագրավ լուսանցային պատկերներ), և համեմատել, թե վկայաբանություններում տրվող նկարագրություններն ինչպե՞ս են արտացոլված մանրանկարներում: Մա միաժամանակ հնարավորություն կտար պատկերացում կազմել տվյալ սրբի՝ տարբեր ժամանակներում ընկալման վերաբերյալ:


7. Գնահատելի է նաև ատենախոսության սահուն շարադրանքը, գրագետ լեզուն և դյուրընթեռնելի ոճը: Այնուհանդերձ, որոշ դեպքերում առկա են ոչ ճիշտ ձևակերպումներ: Օրինակ՝ (էջ 6) «Հայսմավուրքների համաբարբառներ»-ի փոխարեն պետք է լինի «Համաբարբառ հայսմավուրք», «արտասահմանյան ուսումնասիրություններ (էջ 9)» ձևակերպման փոխարեն՝ օտարալեզու ուսումնասիրություններ կամ պարզապես՝ օտար (էջ 18): «Դաշանց թուղթ»-ը ավելի ճիշտ է բնորոշել ոչ թե «անկանոն գրվածք» (էջ 56), այլ՝ անվավեր: Աշխատանքում հաճախադեպ «սրբացնել» բառի փոխարեն առաջարկում ենք գործածել «սրբադասել» բառը, որը կանոնականացման իմաստով ավելի ճիշտ է: Խիստ ցանկալի է, որ հավելվածում ներկայացված յուրաքանչյուր նկարի վերաբերյալ տրվեր համառոտ ծանուցում:

Այսպիսով, ներկայացված աշխատանքը ուրույն մոտեցմամբ, համակողմանի վերլուծություններով, հայ և օտար աղբյուրների և ուսումնասիրությունների ընդգրկմամբ կատարված հետազոտություն է:

Շավարշ Ազատյանի «V-VIII դարերի հայ սրբախոսական գրականության պատմագիտական արժեքը» թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտական թվանիշին, սեղմագրում և հրատարակված 6 հոդվածում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները: Ուստի՝ կարծում ենք, որ աշխատանքի հեղինակն, անտարակույս, արժանի է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Արմինե Մելքոնյան



պ.գ.թ., Մաշտոցյան Մատենադարանի ավագ գիտաշխատող

Հաստատում եմ Ա. Մելքոնյանի ստորագրությունը

Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական քարտուղար, պ.գ.թ.



Վ. Թորոսյան

06. 12. 2021 թ.